## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆԸ՝ ՏԻԱՐ ԳԵՎՈՐԳ ԵՍԱՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ

**Լիզբոն**

Խոր վշտով այսօր լսեցինք տիար Գևորգ Եսայանի մահվան գույժը։ Սրտանց կմասնակցինք ձեր և հանգուցյալի ընտանիքի սուգին և կաղոթենք որ Տերը քաղցրությամբ ընդունի նրա ազնիվ հոգին երկնից արքայության մեջ։

Նրա կյանքը եղավ անդուլ աշխատանք ու ծառայություն նվիրված առաքինի ու բարի գործոց։

Օրհնությո՜ւն նրա վաստակին, օրհնությո՜ւն նրա պայծառ հիշատակին։

Կիրակի, ս. պատարագ և հանդիսավոր հոգեհանգիստ Ս. Էջմիածնի Մայր տաճարում՝ Մեր նախագահությամբ։

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 ապրիլի 1981 թ.